«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի նի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 07

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 01.11.2016թ.ժամը 17.10

Համաձայն,«Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջատեր՝Վարուշ Կյորեղյանի փաստաբան Գևորգ Չաքմիշյանից,«Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար,ս/թ-ի Նոյեմբերի 01-ին հրավիրված Կարգապահական հանձնաժողովի նիստ.

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը

«Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանը: Բողոքաբեր՝Վարուշ Կյորեղյանի փաստաբան Գևորգ Չաքմիշյանը պատշաճ ծանուցված էր բայց հրավիրված նիստին չէր մասնակցում,քանի որ հեռախոսազանգով տեղեկացրել էր ծանրաբեռնվածության մասին և ժամանակային անհարմարության պատճառով չներկայանալու վերաբերյալ:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
«Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջատեր՝Վարուշ Կյուրեղյանի փաստաբան Գևորգ Չաքմիշյանից,«Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանի վարքագծի վերաբերյալ հարուցել կարգապահական վարույթ և պարզել թե ինչու կառավարիչը առանց որևէ ընկալելի և ողջամիտ պատճառաբանության նվազեցրել է պարտապանի պարտքը և ինչու չի կատարել օրենքով սահմանված իր պարտականությունները,բողոքի քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված բողոքը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը և նշեց,որ ըստ էության բողոքում նշված փաստերը կապված պարտատիրոջ պահանջի չափի նրա հիմնավորվածությանը և կառավարչի առարկություններն,վերաբերվելի չեն կարգապահական հանձնաժողովի քննարկմանը և առավել ևս այդ մասին որոշում կայացնելը,քանի որ հենց բողոքաբերի ներկայացմամբ դրանք ներկայացվել են դատական նիստերին և օրենքով սահմանված կարգով դրանց քննությամբ և որոշման կայացմամբ իրավասու է միայն դատարանը:

Պարզաբանումներ տալու համար ձայն տրվեց կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանին,ով հանձնաժողովին ներկայացրեց 17.10.2016թ-ի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ /0073/04/16 որոշման լուսապատճենը և կարդաց որոշեց մասը,ըստ որի.

-Վարուժ Կյուրեղյանի ներկայացուցիչ Գևորգ Չաքմիշյանի դիմումը «Մասիսավան Բրենչ» ՍՊԸ ի նկատմամբ Վարուժ Կյուրեղյանի պահանջը հաստատելու վերաբերյալ մերժել:

Պարզաբանեց նաև որ խնդիրը Վարուժ և Վարուշ անունների մեջ է,որի հետևանքով դիմումը մերժվել է,որ այս օրվա դրությամբ բողոքաբերը չի հանդիսանում սնանկության գործով պահանջատեր և չի կարող ունենալ որևէ շահագրգռվածություն վարույթում կատարվող գործողությունների հետ:

Այդ փաստի վերաբերյալ ձայն խնդրեց հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը և ներկայացրեց,որ դիմումում նշված է՝որ բողոքաբերը հանդիսանում է Վարուշ Կյուրեղյանի ներկայացուցիչը,բայց տվյալ պահանջը ներկայացնում է Վարուժ Կյուրեղյանը ու դիմումին կից չի ներկայացվել ներկայացուցչի լիազորությունները հավաստող լիազորագիր,ուստի ինքը գտնում է,որ դիմումը ներկայացված է ոչ պատշաճ լիազորություններ ունեցող անձի կողմից և քննարկման ենթակա չի:

Հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը համախմբելով կարծիքները հայտեց,որ ըստ ներկայացված փաստերի պարզվում է,որ դիմումատուն չի ներկայացրել լիազորագիր,որով կապացուցեր իր լիազորությունները և կապացուցեր նաև իր վստահորդի սնանկության վարույթում գրանցված պարտատեր լինելու փաստը,իսկ սնանկության գործով կառավարչի ներկայացրած՝17.10.2016թ-ի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ2 /0073/04/16 որոշումամբ,մերժվել է Վարուժ Կյուեղյանի ներկայացրած պահանջ:Այսինքն դիմում ներկայացնելու պահին ոչ Վարուշ կամ Վարուժ Կյուրեղյանը կամ Կյուրեղյանները,առավել ևս նրա կամ նրանց ներկայացուցիչը, «Մասիսավան Բրենչ» ՍՊԸ-ի սնանկության վարույթում կողմեր չեն և բնականաբար «Սնանկության մասին»ՀՀ օրենքով երաշխավորված նրանց ոչ մի իրավունք չի կարող խախտվել ոստի «ՍԳԿԿ» ԻԿԿ 16.11.2013թ.Ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրությամբ հաստատված «Կարգապահական վարույթի անցկացման»Կարգի 2-րդ կետի հիմքով դիմումատուն չի կարող հանդիսանալ այն ֆիզիկական անձը,որի դիմումի համապատասխան կարող է հարուցվել կարգապահական վարույթ:

Հանձնաժողովի նախահն առաջարկեց վերոգրյալ հիմքով մերժել կարգապահական վարույթ հարուցելը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – «Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջատեր՝Վարուշ Կյուրեղյանի փաստաբան Գևորգ Չաքմիշյանի դիմումի հիմքով,«Մասիսավան բրենչ»ՍՊԸ-ի սնանկության գործով, կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեյանի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելը մերժել:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան